տեր» և որտեղ երթևեկությունը խճճված արահետներով էր բացառապես կատարվում՝ ոտքով կամ գրաստով, ավտոների շարժման համար կառուցված են հարմար ուղիներ։ Հեռախոսի, էլեկտրականության, հեռագրի, ռադիոյի խիտ ցանցը կապել է իրար հետ բոլոր բնակավայրերը։

ԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ

Վերը բնակավայրերի մասին խոսելիս արդեն մատնանշեցի, թե ինչպես են գյուղերը իրենց դասավորությունը հարմարեցրել տեղական աշխարհագրական և տնտեսական պայմաններին։ Տեսանք, որ Բուն Զանգեզուրում մինչև այսօր էլ գյուղերն իրենց մեծ մասով խորացած են նեղ ձորերի մեջ, որտեղ շատ անգամ գրեթե ուղղաձիգ հատվող կողերին բնակարանը ձգտում է օգտագործել քերծը, մտնելով նրա խորքը որպես քարանձավ։ Այդ քրատակնէրից շատերը, անշուշտ, մարդուս ապաստան են տվել շատ նախնական դարերում, բայց այրերն օգտագործելու անհրաժեշտությունը մինչև վերջին ժամանակներս էլ չի վերացել և թեև ամեն կերպ խույս են տալիս ծակէրի մեջ բնակվելուց, այնուամենայնիվ, այրերը շարունակում են ծառայել որպես մառանէր, պահեստներ, խոտանոցներ։ Այսպիսի տնտեսական պետքերի համար նոր փորած քարանձավներ մեր գիտարշավը այցելել է, օրինակ, Սիսիանում (Սիսավանում), որտեղ լավային շերտի տակ հողից մաքրված ընդարձակ սրահը օգտագործվում է որպես մառան, որպես երկրագործական և այլ տնային իրերի պահեստ, իսկ ամառվա սաստիկ շոգերին՝ նաև որպես հովանոց։

Քարանձավները պատահում են գավառի բոլոր երեք շրջաններում, օրինակ՝ Բռնակոթի, Ուզի, Տաթևի մոտ, սակայն նրանք առանձնապես բնորոշ են Գորիսի՝ Բուն Զանգեզուրի համար։ Այստեղ Գորիսի գետահովտի հյուսիս-արևմտյան մասում գտնվում է հենց Ծակէրի ձորը, որը այդպես է կոչվում այստեղ մեծ քանակությամբ պատահող այրերի շնորհիվ։ Նրանք փորված են թե՛ Որոտնա գետի—Հալիձոր, Խոտ, Շինուհայր (Շնեհեր) և թե՛ նրա ձախակողմյան օժանդակների կարճ ձորերի մեջ։ Նրանցից մեծ մասը խորացած է հենց ձորի կողի մեջ, սակայն քիչ չեն և այնպիսի քարայրներ, որոնք զետեղված են հողմահարված ժայռաբուրգերի մեջ։

Այրերը ներքուստ չեն հետևել մի ընդհանուր պլանին, այլ յուրաքանչյուրն իր խորությունը և լայնությունը հարմարեցրել է ապարների բնույթին և ընտանեկան պահանջներին։ Պատահում են մի քանի հարկ ունեցող քրատակնէր՝ ներքին սանդուղքներով իրար հետ միացած։ Դուռը սարքված է լինում միայն ստորին հարկի համար։ Երկրորդի բացվածքը ծառայում է որպես պատշգամբ և ձմեռը հաճախ չի ծածկվում։ Այս դեպքում երկրորդ հարկը բնակության համար դառնում է անհարմար. ջերմացվում է միայն ստորին հարկը, մեծ մասամբ մեջտեղում վառվող բաց օջախավ կամ հատակի մեջ հորած փոքր թօնրի օգնությամբ։ Օջախը թե թօնիրը զետեղվում են դռանն ավելի մոտ։ Ծուխը հեռացվում է դռան գլխին սարքված անցքով, որը հաճախ ծառայում է նաև որպես լուսամուտ։ Բնականաբար՝ քրատակի պատերը ծածկված են լինում հաստ մուրով՝ գուցե քանի՞-քանի՞ սերունդ արդեն քարերին կպած։ Պատերի մեջ թողած պատրհանէրը ծառայում են որպես պահարան՝ ամանեղենի,